Ծուշանիկ Կուրղինյան

Մահին

Երբ աշխարհը կերտվեց՝ դու ոչինչ էիր: Եվ որովհետև դու ոչ մի կերտվածքի նյութ չես ունեցել տալու, աստղերին՝ փայլ, ծաղիկներին՝ բույր, քամուն՝ ուժ, մնացիր ոչինչ, աննյութ, անբովանդակ:

Տիեզերքում ամեն ինչ, ամեն շնչավոր թե անշունչ իր տեղը, իր կյանքը, ամբողջությունն ունի . իսկ դու ոչինչ չունես: Ուզում ես, որ խլես տանես, լինես ոչինչ և մնաս ոչինչ . . .

Եվ խեղճ ու գետնաքարշ շրջում ես ինձ հետ . սպասում ընկերուհուս, որ գրկես տանես . . . Երբ հանդիպենք անկարող կլինեմ կռվելու քեզ հետ և հենց իմ այդ անկարողության մեջ է քո ոչնչության մեծ գաղտնիքը . . .

Դու եկար, երբ ես ծնվեցի . կգաս և մեռնելիս: Ես ապրելով եմ հերքել ոչնչությանդ գոյությունը . . .

Սակայն դու ինձ կտանես լոկ այն ժամանակ, երբ ես ցանկանամ:

Երբ ցանկանամ ժայռի գագաթիդ խորխորատը թռչելու ակնթարթը վայելել:

Երբ ցանկանամ ընկնել ալիքների գիրկը, ծածկվել հորձանքների մեջ:

Երբ ցանկանամ կտրել կյանքիս թելը ոսկի:

Երբ անցած ճամփիս փոշին իջնի մազերիս վրա:

Երբ կորցնեմ օրերիս հաշիվը, հոգուս թևերը, աչքերիս աստղերը:

Երբ չմնա ինձ համար էլ ոչ մի երգ աշխարհի հետ սիրտս պսակող:

Երբ էլ չցանկամ ապրելու համար ապրել՝ հասիր:

Երբ երկնչեմ տառապանքի մրրիկներից՝ հասիր:

Երբ փախչեմ կյանքի ահազանգից՝ հասիր:

Երբ ատեմ նմանիս՝ վազիր:

Իսկ մինչ այդ սողա ոտքերիս տակ, գալարվիր, սպասիր, ո՛վ դու մահ, իմ պաղ ոսկորների բեռնակիր . . .

1904 թ .